ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

26 դեկտեմբերի 2017 թվական

2-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 4-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 17.20

Տարոն Մարգարյան

-Ավագանու հարգելի անդամնե՛ր, հարց ու պատասխանի համար գրանցվել են ավագանու 9 անդամ՝

Դավիթ Խաժակյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Թեհմինա Վարդանյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Անի Խաչատրյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Սերգեյ Ղահրամանյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Անի Սամսոնյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Ալեն Սիմոնյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Հարություն Բաբայան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Տիգրան Ավինյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Արայիկ Հարությունյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Առաջին հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյան, խնդրե՛մ:

Դավիթ Խաժակյան

-Շնորհակալությու՛ն, հարցս վերաբերում է Շենգավիթ վարչական շրջանին: Նոյեմբերի 2-ին ես գրություն էի ուղարկել Բագրատունյաց փողոցի վրա գտնվող կրպակի ապամոնտաժման աշխատանքների վերաբերյալ և հղել էի մի քանի հարց, թե ում որոշմամբ է

հանձնարարվել ապամոնտաժել այդ կրպակը, ինչպիսի այլ կրպակներ են հարակից տարածքում քանդվելու և այս գրությունը հրապարակել էի նաև սոցիալական ցանցերում:

Գրության մեջ մի վրիպակ էի թույլ տվել. Բագրատունյաց հասցեի վրա է գտնվում և կրպակը, և սեփականատերը, հասցեի փոխարեն գրել էի սեփականատիրոջ հասցեն: Ինձ պատասխանը Շենգավիթ վարչական շրջանից եկել է շատ հակիրճ: Պատասխանը հետևյալն է, որ իմ կողմից գրությամբ ներկայացված Բագրատունյաց 29-4 հասցեում տնտեսվարող Գրիգոր Տեփանյանին պատկանող կրպակ տեղակայված չէ:

Ես ունեմ երկու հարց, երկուսն էլ վերաբերում են այս դեպքին: Առաջին հարցը հետևյալն է. իմ հարցմանը պատասխանելիս տեղյակ էր արդյոք համապատասխան ոլորտի պատասխանատուն, թե խոսքը կոնկրետ որ կրպակի մասին է, անկախ իմ թույլ տված վրիպակից և երկրորդ հարցը, թե ի՞նչ ընթացքի մեջ է գտնվում այդ հարցը:

Տարոն Մարգարյան

-Շնորհակալությու՛ն, հարցին կպատասխանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի տեղակալը, խնդրեմ:

Հովհաննես Ղալեչյան

-Շնորհակալությու՛ն, ինչ վերաբերում է վրիպակին, մենք պարտավոր չենք ենթադրել Դուք վրիպակ եք թույլ տվել, թե տվյալ տեղեկատվությանն եք տիրապետում: Ինչ վերաբերում է Ձեր նշած կրպակին. հարևանությամբ գտնվող բազմաբնակարան շենքի բնակիչների դիմում-բողոքի արդյունքում, քանի որ տվյալ կրպակը չուներ իրավունքի պետական գրանցում և գտնվում է մայթի վրա, տվյալ պահին օգտագործվում էր առանց քաղաքաշինական փաստաթղթերի, և օգտագործողը ծանուցվել է կրպակն ապամոնտաժելու վերաբերյալ:

Տարոն Մարգարյան

-Երաժշտական դպրոցի դիմացի մասի՞ն է խոսքը:

Հովհաննես Ղալեչյան

-Ո՛չ, Գարեգին Նժդեհի հրապարակից դեպի Բանվորի արձան գնացող Բագրատունյաց փողոցի առաջին հատվածի աջ կողմի վրա:

Դավիթ Խաժակյան

-Ես ցանկանում եմ հայտնել այն նկատառումը, որ տարբեր վարչական շրջանների ղեկավարների հետ աշխատանքի ընթացքում, այո՛, Դուք պարտավոր չեք մեր սխալները, վրիպակները հաշվի առնել, բայց կան բազմաթիվ վարչական շրջանների ղեկավարներ, ովքեր հաշվի են առնում և պատասխանը ներկայացնում են հաշվի առած, և մենք մեր աշխատանքային հարաբերությունները կառուցում ենք համապատասխան կերպով: Եթե

մոտեցումն այն է, որ պետք է ինձ պատասխանել՝ օգտվելով իմ թույլ տված վրիպակից, ապա ես կարող եմ նաև հաջորդ աշխատանքները ևս կատարել, արդեն ի պաշտոնե:

Տարոն Մարգարյան

-Չեմ կարծում, որ միտումնավոր է արվել: Եթե վրիպակ է տեղի ունեցել, կարելի էր ահազանգել, վարչական շրջանի ղեկավարի հետ խոսել և այդ հարցը կարգավորել: Մենք բոլորս համագործակցում ենք և փորձում ենք մեր քաղաքի համար աշխատանք իրականացնել: Ոչ ոք չի ցանկանում վրիպակները վերցնել և շրջանցել այդ հարցերը: Չեմ կարծում, որ այդտեղ միտում կա:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Թեհմինա Վարդանյան, խնդրե՛մ:

Թեհմինա Վարդանյան

-Շնորհակալությու՛ն, քանի որ նախորդ ելույթից հետո պարոն Նիկոյանին հնարավորություն չկար արձագանքելու, հիմա հարց եմ ուզում ուղղել: Ես քննարկումներին մասնակցել եմ և չեմ հիշում, որ Դուք նշեք, որ պոլիկլինիկան է հիմնանորոգվելու և, եթե Դուք ասում եք, որ դա պոլիկլինիկայի բյուջեից չի կրճատվում, ապա որտեղից, որովհետև և 2017թ. և 2018թ. զարգացման ծրագրերը և բյուջեի նախագծերն առողջապահության մասով գրեթե նույնն են: Նույն բյուջեի նախագծում գրված բժշկական ծառայությունների որակի բարձրացում, թանկարժեք և դժվարամատչելի հետազոտությունների անցկացման մատչելիության ապահովում, հաստատությունների հիմնանորոգում: Այստեղ էլ գրված չէ, որ մեկն է հիմնանորոգվելու, սարքավորումների արդիականացում և այլն: Այսինքն՝ գլոբալ առումով և 2017թ. բյուջեն, և 2018թ. բյուջեն նույն նախագիծն է, եթե պոլիկլինիկաներից չի կրճատվում, ապա որտեղից է կրճատվում: Խնդրում եմ պատասխանեք, շնորհակալություն:

Վահե Նիկոյան

-Շնորհակալությու՛ն: Նախ, առողջապահական օբյեկտների հիմնանորոգում ծրագիրը բյուջեում հստակ նախատեսած է, կրճատում ասելով, եթե նկատի ունեք ընթացիկ տարվա հետ համեմատականով, ապա առողջապահական օբյեկտների հիմնանորոգումը 2017թ. բյուջեում նախատեսել էր նաև առողջապահական ոչ պոլիկլինիկաների, կազմակերպությունների նորոգման ծրագիր, այդ մասով, բնականաբար, ծրագիրն ավարտվել է, իսկ պոլիկլինիկաների մասով, ծրագիրը նույն ծավալներով պահպանվել է 2018թ.: Դրա շրջանակներում նախատեսվում է բոլոր այն պոլիկլինիկաները, որոնց տանիքները հիմնանորոգման կարիք ունեն, իրականացնել տանիքների վերանորոգման աշխատանքներ:

Մնացած՝ առողջապահության ոլորտի ծրագրերը, խոսքը վերաբերում է վերազինմանը և այլն, ըստ էության, նույն ծավալներով շարունակվում են:

Թեհմինա Վարդանյան

-Այսինքն՝ միայն տանիքների հիմնանորոգում է իրենից ենթադրում, քանի որ գրված չէ տանիքի հիմնանորոգում: Ուստի՝ ենթադրում եմ, որ կոնկրետ պոլիկլինիկայի ամբողջական հիմնանորոգում է, փաստորեն՝ տանիքների հիմնանորոգում է:

Տարոն Մարգարյան

-Այո՛:

Թեհմինա Վարդանյան

-Ուղղակի պարզելու համար:

Վահե Նիկոյան

-Բյուջեի ուղերձում գրված է:

Տարոն Մարգարյան

-Այո՛, տանիքների վերանորոգման մասին է խոսքը, իսկ ինչ վերաբերում է պոլիկլինիկաների վերանորոգմանը, այդ հարցը քննարկման փուլում է, քննարկումներ են իրականացվում ՄԱԿ-ի, ինչպես նաև Եվրոպական բանկի հետ: Հնգամյա ծրագրում ներկայացված էր այդ հարցը, որը ավագանու կողմից հաստատվել է. մինչև 2022թ. բոլոր պոլիկլինիկաները պետք է հիմնանորոգվեն, հագեցած լինեն նոր սարքավորումներով, ինչպես նաև ողջ աշխատակազմի համար պետք է կազմակերպվի վերապատրաստման կուրսեր:

Թեհմինա Վարդանյան

-Շնորհակալությու՛ն:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Անի Խաչատրյան, խնդրե՛մ:

Անի Խաչատրյան

-Ես այս հարցը միշտ տալու եմ պարոն քաղաքապետ: Հարցս ուղղում եմ Էրեբունի վարչական շրջանի ղեկավարին. Դուք ունեիք 2 ամիս ժամանակ, արդյոք ճշտեցիք Ձեր վարչական շրջանի Ազատամարտիկների այգու տարածքում գտնվող տունն ու՞մ է պատկանում և ինչպե՞ս է կառուցվել այդ ապօրինի շինությունը: Ձեր պատասխանից է կախված, որովհետև ես պատրաստվում եմ վաղը գրություն գրել նաև վարչապետին: Խնդրում եմ հստակ պատասխան տալ:

Տարոն Մարգարյան

-Հարցը գրավոր ներկայացրեք, կպատասխանենք:

Անի Խաչատրյան

-Այդ դեպքում վարչապետին եմ գրելու, բայց այսօր հարց ու պատասխան է, ես վարչական շրջանի ղեկավարին եմ հարցնում:

Տարոն Մարգարյան

- Հարցը գրավոր ներկայացրեք, Ձեր հարցին կպատասխանենք:

Անի Խաչատրյան

-Երկրորդ հարցս ևս ուղղում եմ Էրեբունի վարչական շրջանի ղեկավարին: Խնդրում եմ ցույց տվեք Էրեբունու փողոցի 35, եթե չեմ սխալվում, բազմաբնակարան շենքի տարածքում գոնե մեկ խաղային պարագա երեխաների համար, չեմ ասում խաղահրապարակ, այլ մեկ խաղային պարագա: Այդ մասին իմ առաջարկը, իհարկե, մերժվեց բյուջեի: Նախատեսվում է արդյոք այդ փողոցի երեխաների համար նման բան:

Տարոն Մարգարյան

-Հարցին կպատասխանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Դավիթ Գրիգորյանը, խնդրե՛մ:

Դավիթ Գրիգորյան

-Շնորհակալությու՛ն հարցի համար: Հարգելի ավագանու անդամ, անցյալ անգամ ևս Դուք այս հարցը բարձրացրեցիք: Ես ուսումնասիրել եմ, այդ շենքի հարակից տարածքում համապատասխան տարածք չկա խաղահրապարակ կառուցելու համար, իսկ դրանից երկու շենք ներքև բավականին մեծ խաղահրապարակ ունենք կառուցած, որտեղից օգտվում են այդ բակի երեխաները: Կարող ենք միասին գնալ, ես Ձեզ ցույց կտամ:

Անի Խաչատրյան

-Ես մեկ շենքի համար չեմ ասում, ամբողջ Էրեբունու փողոցին է վերաբերում իմ հարցը. Էրեբունու 1-ից մինչև Էրեբունու 35-ը ընկած հատվածի մասին է խոսքը:

Դավիթ Գրիգորյան

-Ես նորից եմ ասում վաղը կարող ենք միասին գնալ, տեղում նայել. ես կարող եմ 1-ից մինչև 35 շենքերի հատվածում 3 խաղահրապարակ ցույց տալ:

Տարոն Մարգարյան

-Մենք 2018թ. բյուջեում նախատեսել ենք Էրեբունու փողոցի վրա՝ Էրեբունի թանգարանի դիմացի հատվածում, այգու վերականգնման աշխատանքներ իրականացնել և այնտեղ հանգստի գոտի կառուցել:

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Սերգեյ Ղահրամանյան, խնդրե՛մ:

Սերգեյ Ղահրամանյան

-Հարցս վերաբերում է ընդհանուր քաղաքին, քաղաքի տարբեր մասերում տեղի են ունենում մեծ կամ բազմաբնակարան շենքերի շինարարություններ և դա բազմաթիվ վայրերում է տեղի ունենում: Մտահոգություն ունեմ, որ շինարարության տարածքից մեծ մեքենաներ դուրս գալուց ամբողջ այդ փոշին, կեղտը, ցեխը կամ մնացած ամեն ինչը մեքենայի հետ դուրս են գալիս փողոց: Մոտ հինգ-վեց ամիս առաջ Դուք հանձնարարական էիք տվել, որ դրան ուշադրություն դարձնեն, որպեսզի քաղաքը չաղտոտվի:

Փաստացի ես մենակ մի դեպք գիտեմ, որ շինհրապարակից մեքենան դուրս գալուց հետո մաքուր է մնում: Դա, կարծես թե, ներկայումս կառուցվող Չինաստանի դեսպանատունն է, որ այդ հատվածից դուրս եկող մեքենաները, որևէ, այսպես ասած, հետքեր չեն թողնում: Կան սակայն բազում փողոցներ սկսած Դավիթ Բեկից, որտեղ ընդհանրապես անմխիթար վիճակում է, քանի որ այդ հատվածում կա նաև գաջի գործարան, դուրս են գալիս և փողոցն ամբողջությամբ աղտոտվածության է ենթարկվում:

Հարցիս մտահոգությունից ելնելով՝ ուզում եմ ճշտել, արդյոք պատրաստվում եք մի փոքր ավելի խիստ վերաբերվել այդ հարցին, քանի որ այդ հարցն ամբողջ քաղաքին է վերաբերում:

Տարոն Մարգարյան

-Այո՛, բնականաբար, շատ խիստ ենք վերաբերում և ամեն երկուշաբթի տվյալ ոլորտի պատասխանատուներն այդ մասին զեկուցում են: Այս հարցում նաև ճանապարհային ոստիկանությանն ենք ներգրավել, քանի որ վարչարարությունը նաև իրենք են իրականացնում:

Մենք համատեղ ծրագրեր ենք իրականացնում աշխատակազմի տրանսպորտի, քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությունների, ինչպես նաև ճանապարհային ոստիկանության հետ միասին: Ներկայումս խնդիրները հիմնականում առաջանում են նաև եղանակներով պայմանավորված, պետք է բոլորս միասին ամենօրյա աշխատանք տանենք Ձեր բարձրացրած հարցին վերջնական լուծում տալու համար:

Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Սերգեյ Ղահրամանյան, խնդրե՛մ:

Սերգեյ Ղահրամանյան

-Շնորհակալությու՛ն, երկրորդ հարցս կրկին վերաբերում է համայնքային վճարովի ավտոկայանատեղիներին, այստեղ կա խնդիր, իհարկե ոչ մասսայական: Ես խոսեցի պարոն Նավասարդյանի հետ, նա կարծում էր, որ իմ ասելիքը մասսայական է, երբ վճարովի ավտոկայանատեղիի տարածքում հայտնվում են ոմն մարդիկ, ովքեր ասում են, որ այս

հատվածում կարող ենք վճարում չկատարել և ինձ վճարելով այդ 100 կամ 200 դրամը, մեջբերում եմ. «կարող եք հանգիստ գնալ Ձեր գործերով»:

Ինչպե՞ս եք Դուք, որպես քաղաքապետ, վերաբերում դրան, այն դեպքում, որ վճարովի ավտոկայանատեղիների կազմակերպումը, այսպես ասած, ենթադրում է, որ մեր փողոցներում այլևս նման մարդիկ չպետք է լինեն: Ի՞նչ քայլեր են հնարավոր ձեռնարկել, քանի որ ես դեռևս նման մի փոքր, այսպես ասած, աղմկահարույց ինչ-որ դեպք չգիտեմ, որ մարդկանց չասեմ դատ ու դատաստան են տեսնում, բայց ինչ-որ պատժիչ գործողություններ իրականացվեն, որպեսզի հետագայում նման բաներ չլինեն:

Ես ինքս քաղաքում հաշվել եմ մոտ տաս նման դեպք, որտեղ կան կարմիր գծեր, ընդորում շատերը տեղյակ են և՛ վարչական մարմինների, և՛ վարչական շրջանի աշխատակազմի ներկայացուցիչները, բայց այդ մարդիկ նորից գոյատևում են և շարունակում են իրենց այդ աշխատանքն արդեն երեք, չորս տարի և իրենց, այսպես ասած, ոչինչ չի սպառնում, որպեսզի մտահոգվեն, որ մի օր այդ հարցում օրենքը կարող է գերակայել: Շնորհակալությու՛ն:

Տարոն Մարգարյան

-Պարոն Ղահրամանյան, մենք նույնպես ունենք մտահոգություն այդ հարցի շուրջ, որի կարգավորման համար ստեղծված է աշխատանքային խումբ, որում ընդգրկված են աշխատակազմի առևտրի և սպասարկումների, տրանսպորտի վարչությունների ներկայացուցիչներ, ներգրավված են նաև Երևան քաղաքի ոստիկանության ներկայացուցիչներ:

Ձեր կողմից ներկայացված այդ տասը դեպքի մասին մենք տեղյակ ենք, դիմել ենք իրավապահ մարմիններին՝ Երևան քաղաքի ոստիկանությանը, Երևան քաղաքի դատախազությանը, որպեսզի համատեղ ուժերով կարողանանք այդ հարցին լուծում տալ:

Անթույլատրելի է, որ մարդիկ կանգնում և ապօրինի փող են հավաքում, երբ Երևան քաղաքում կան վճարովի ավտոկայանատեղեր, դա անօրինական է: Կոչ ենք անում երևանցիներին նման դեպքերում կանխիկ գումար չվճարել և հիշեցնում եմ, որ վարորդները վճարումներ կարող են կատարել բանկերում, վարչական շրջանների աշխատակազմերում, քաղաքապետարանում և վճարումների համար նախատեսված տերմինալներում:

Սերգեյ Ղահրամանյան

-Շնորհակալությու՛ն:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը «ԵԼՔ» խմբակցության անդամ Անի Սամսոնյան, խնդրե՛մ:

Անի Սամսոնյան

-Շնորհակալությու՛ն, իմ հարցն ուղղված է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար պարոն Ալեքսանյանին: Օգոստոսին ինձ դիմել էին Գուսան Շերամի փողոցից դեպի «Ֆարմատեկ» դեղագործական ընկերության արդյունաբերական համալիր տանող, հարակից բնակելի տների բնակիչները, ասեմ, որ այդտեղ առկա է շուրջ 300 բնակելի տուն: Նրանք ասել էին, որ փողոցի երկարությունը, մոտավորապես, 1 կմ է, կան տեղադրված 30 սյուն, որոնցից 20-ի վրա առկա են լամպեր, սակայն չեն գործարկվում, իսկ մնացած 10-ի վրա դրանք բացակայում են: Այս բնակելի տների բնակիչներն ունեն լուսավորության խնդիր:

Ես այս հարցով դիմել էի և ինձ եկել էր շատ գոհացուցիչ պատասխան, որ ցանցի վերակառուցումը կլինի 2018թ. կապիտալ վերանորոգման ծրագրում, սա հասկանալի էր, սակայն նաև նշվել էր, որ վնասված լուսատուներն անմիջապես կփոխարինվեն նորերով: Ես մինչև այսօր հետևողականորեն հետևում եմ, բնակիչների հետ զրուցում եմ, սակայն նրանք ասում են, որ մինչև այսօր որևէ լուսատու չի փոխվել, և նրանք դեռ ունեն այդ լուսավորության խնդիրը:

Ես կցանկանայի, որ վարչական շրջանի ղեկավարն ինձ պատասխաներ արդյոք տեղյակ է խնդրին և ի՞նչ լուծումներ կարող են առաջարկել, եթե դեռ ոչինչ չի լուծվել, շնորհակալությու՛ն:

Արտակ Ալեքսանյան

-Շնորհակալ եմ հարցի համար, հարգե՛լի ավագանու անդամ: Իհարկե՛, տեղյակ ենք այդ խնդրի մասին, այն կընդգրկվի 2018թ. ծրագրերում: Ինչ վերաբերում է վնասված լուսատուները փոխելու հարցին, մենք կճշտենք, ինչ պատճառով չեն փոխվել և Ձեզ կտեղեկացնենք:

Անի Սամսոնյան

-Շնորհակալությու՛ն:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Ալեն Սիմոնյան, խնդրե՛մ:

Ալեն Սիմոնյան

-Նախ ուզում եմ անդրադառնալ այն մարդկանց, ովքեր այսօր ներքևում հավաքվել էին, ուրիշ հարց էի ուզում տալ, բայց, երբ ներքևում մարդիկ էին հավաքված, պարտավորվեցի իրենց համար հարցնել: Արդեն որերորդ անգամ Ասատրյան Գոհարիկի կողմից դիմումներ են լինում ուղղված Երևանի քաղաքապետարան: Դուք երևի տեղյակ եք, խոսքը Հյուսիսային պողոտայի բնակիչների մասին է: Մենք արդյոք հնարավորություն ունենք որևիցե կերպ աջակցել և այդ մարդկանց դիմումներին պատասխան լինելու է, թե՝ ոչ:

Երկրորդ հարցս վերաբերում է Երևան քաղաքում տեղի ունեցող մի քանի շինության և շինարարության, մասնավորապես, հաճախ կարելի է տեսնել, օրինակ՝ այգու կամ շենքի վրա ինչ-որ ժամանակահատված է նշված, թե այս շինարարությունը կավարտվի 2017թ., ինչպիսին, օրինակ, կար փակցված Սարյան-Մաշտոցի պողոտա հատվածում գտնվող այգու շինարարության պատի վրա: Շինարարությունը չի ավարտվել և չի ավարտվում, ես մոտակայքում եմ բնակվում, կարողանում եմ ամեն օր հետևել:

Քաղաքում ունենք նաև այնպիսի շենքեր, ինչպիսիք են Աբովյան փողոցի վրա «ԳՈՒՄ»-ի շենքը, որը ինչպես գիտեն պատկանում է Արա Աբրահամյանին, ինչպես նաև Կայարանում գտնվող այն լքված շենքը:

Չունենք արդյոք որևէ լծակ, որ այդ շենքերի կամ շինարարությունն ավարտին հասցնենք, կամ որևիցե ձևով այդ շինարարությունը, եթե ավարտին չի հասցվում, մենք որևէ եղանակով արձագանքենք, որովհետև դրանք շատ բաց տեղերում են գտնվում և Երևան քաղաքի արտաքին տեսքը փչացնում են:

Պարոն քաղաքապետ և վերջապես տոնածառը ե՞րբ ենք փոխելու, 10-ամյակից ավելի նույն տոնածառն է, և բոլորը դա են քննարկում: Շնորհակալությու՛ն:

Տարոն Մարգարյան

-Եթե միայն տոնածառն է մնացել քննարկման առարկա, շատ նորմալ է: Գիտեք, որ Երևան քաղաքի կենտրոնական տոնածառը փոխելու համար ահռելի գումարներ են անհրաժեշտ: Այսօր նպատակահարմար չէ նման մեծ գումարներ ծախսել Հանրապետության հրապարակի տոնածառը փոխելու համար: Բավարարվում ենք եղածով, համոզված եմ, որ վատ տոնածառ չէ: Կարելի է այդ տոնածառով էլ տոն պարգևել երևանցիներին և Երևան ժամանած հյուրերին: Կփորձենք նոր տոնածառ տեղադրել, երբ համայնքի բյուջեն թույլ կտա:

Կիսակառույցների վերաբերյալ տեղեկացնեմ, որ այդ հարցը մեր ուշադրության կենտրոնում է, Երևան քաղաքում վերջին 10-20 տարվա ընթացքում կիսատ թողնված շինարարություններն արդեն գույքագրել ենք, սեփականատերերի հետ աշխատանքներ ենք տանում:

Կոշտ ենք լինելու նրանց հանդեպ, ովքեր կխախտեն պայմանավորվածությունը, մեր կողմից կսկսվի դատական գործընթաց: Կա օրենքով նախատեսված ընթացակարգ, ըստ որի՝ շինթույլտվության ժամկետներն անհրաժեշտության դեպքում կարող են երկարաձգվել:

Ձեր կողմից նշված այգին, որի շինարարական աշխատանքները պետք է ավարտված լինեին դեռևս 2016թ., անհրաժեշտությունից ելնելով հետաձգվեց մինչև 2017թ.: 2018թ. ներդրողի՝ «Տաշիր» ընկերության հետ շինարարական աշխատանքները կավարտվեն, որն էլ կլինի ընկերության նվերը Երևանի հիմնադրման 2800-ամյակին: Այգու բացման

արարողությունը տեղի կունենա տոնական միջոցառումների ժամանակ: Կիսակառույցների խնդրի լուծման գործընթացը շարունակվում է, ընթացքի մասին Ձեզ պարբերաբար կտեղեկացվի:

Ալեն Սիմոնյան

-Պարոն քաղաքապետ, դիմումի հետ կապված չպատասխանեցիք՝ Հյուսիսային պողոտայի բնակիչները եկել էին այստեղ:

Տարոն Մարգարյան

-Հարցին կպատասխանի իրավաբանական վարչության պետ պարոն Առաքելյանը:

Զավեն Առաքելյան

-Հյուսիսային պողոտայի նախկին բնակիչների փոխհատուցման պայմանագրերին կողմ Երևան համայնքը չի հանդիսանում, հետևաբար մենք ոչ օրենքով, ոչ պայմանագրով որևէ պարտավորություններ, բարձրացված հարցի լուծման հետ կապված, չունենք: Պարբերաբար բնակիչների հետ հանդիպում ենք, մանրամասն ներկայացնում ենք այդ խնդիրը, նաև ասեմ, որ բարձրացված հարցի վերաբերյալ արդեն ունեն օրինական ուժի մեջ մտած վճիռներ, այսինքն՝ նաև այդ խնդրի վերաբերյալ կա դատարանի իրավական գնահատականը:

Մենք ցույց ենք տվել ուղղությունը, որ իրականում չենք կարող օգնել, այլ խնդիրներով, եթե մենք ունենք սոցիալական որևէ ծրագրեր, որից որ նրանք կարող են ընդհանուր հիմունքներով օգտվել, միայն այդ մասով կարող ենք օգնել, այլ հարցերով չենք կարող օգնել:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Հարություն Բաբայան, խնդրե՛մ:

Հարություն Բաբայան

-Շնորհակալությու՛ն, ինձ երկու հարց է հետաքրքրում: Առաջինը՝ Տերյան-Աբովյան պուրակը կապող այդ նեղ ճանապարհը, որը կենսական նշանակություն ունի այդ շրջադարձի համար, երբ շինարարություն է կատարվում, այնտեղ, բացի շինարարներից, կայանում են գյուղակադեմիայի ուսանողները կամ այլ աշխատողներ:

Խնդրանքի կարգով, ուղղակի, եթե հնարավոր է որևէ նշան՝ կայանման կամ կանգառն արգելող նշան տեղադրել, կամ ուղղակի ոստիկանությանը խնդրել, որպեսզի այդ ճանապարհը բանուկ դարձնել կամ թույլ տալ բանուկ դարձնելու, սա որպես առաջարկ ներկայացրեցի:

Երկրորդը հարցի ձևով ձևակերպեմ. մենք որոշեցինք, որ պետք է մայթերին տեղակայված սեղանիկները, որոնք որ սպասարկում են ճաշարանները, խոհանոցները, բողոք էր եկել, որ Աբովյան-Պուշկին խաչմերուկի վրա տեղակայված է նման սեղան, և մայթն

ամբողջությամբ փակված է: Երկրորդ հարցը դա էր, ցանկանում էի պարզել, թե կլուծվի այդ հարցը, մայթը կազատվի, թե՝ ոչ:

Տարոն Մարգարյան

-Քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետ պարոն Ասատրյանը երկրորդ հարցը կնշի իր մոտ, կուսումնասիրի և կզեկուցի:

Առաջին հարցի հետ կապված տեղեկացնեմ, որ վերը նշված հատվածում Հրանտ Մաթևոսյանի տուն-թանգարանն է կառուցվում, որի շինարարությունը մոտ ժամանակներս կավարտվի և առաջացած խնդիրը կկարգավորվի: Նշված հատվածում բարեկարգման աշխատանք է իրականացվելու, ամբողջ այգին բարեկարգվելու է, որից հետո շատ դեպքերում նույնիսկ չի թույլատրվի այդ վայրում ավտոմեքենաներ կայանել: Ժամանակ է անհրաժեշտ, շինարարությունն արդեն ավարտական փուլին է հասել, այդ ամենը գտնվում է Երևան քաղաքի գլխավոր ճարտարպետի հսկողության տակ:

Հարություն Բաբայան

-Շնորհակալությու՛ն:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Տիգրան Ավինյան, խնդրե՛մ:

Տիգրան Ավինյան

-Պարոն Մարգարյան նախ կարճ կցանկանամ անդրադառնալ ՄԱԿ-ի հետ կապված հարցին, ես միայն ուրախ կլինեմ որևէ կերպ միջնորդ չհանդիսանալ քաղաքապետարանի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի այդ թիմի միջև, եթե խնդիր չկա:

Պարոն Արեյանը որոշակի պարզաբանումներ տվեց ընդմիջմանը, և ես կարծում եմ այս հարցը կարելի է առայժմ փակել:

Իմ հարցը կրկին վերաբերում է թափառող կենդանիների վնասազերծման խնդրին: Այսօր պարոն Նիկոյանն էլ արձանագրեց, որ և՛ «ԵԼՔ» խմբակցությունը, և՛ «Երկիր Ծիրանի» խմբակցությունն ունեն հնարավորություն առաջարկություններ ներկայացնելու: Ես իմ այդ իրավունքից օգտվել եմ և ներկայացրել եմ առաջարկությունների փաթեթ, սակայն ուզում եմ տեղեկացնել, որ ի պատասխան այդ առաջարկությունների փաթեթի նամակին, ինձ եկել է, որ հարցը քննարկվում է և, այնուամենայնիվ, այն գործընթացը՝ բաց մրցույթի ընթացակարգը, շարունակվում է:

Ես ուզում եմ մի կարևոր հարցի վրա ուշադրություն սևեռել և հարցս ձևակերպել: Նոյեմբերին կայացած հետազոտության արդյունքում «Worldwide Veterinary Service» միջազգային կազմակերպության կողմից արված հետազոտության արդյունքներով Երևան քաղաքում առավելագույնը կա 3600 թափառող շուն՝ համաձայն այդ հետազոտությունների:

Քաղաքապետարանի բաց մրցույթի ընթացակարգով այդ պայմանագրում նախատեսված է տարեկան 14.000 շան վնասազերծում և ստերիլիզացում, տարբերությունը շատ մեծ է 3600 և 14.000:

Տարոն Մարգարյան

-Կներեք, իսկ ո՞վ էր դա հետազոտել:

Տիգրան Ավինյան

-«Worldwide Veterinary Service» միջազգային կազմակերպություն է, որը տարբեր երկրներում ներկայացված է և հենց նման գործերով է զբաղվում, նման հետազոտություններով, ստերջացումով, այսինքն՝ միջազգային ճանաչված ընկերություն է: Եկեք «Worldwide Veterinary Service» կազմակերպությանը մի կողմ դնենք, հասկանանք քաղաքապետարանն ինչպես է այդ հաշվարկն իրականացնում: Ինձ հետաքրքիր է ինչպե՞ս ենք մենք կոնկրետ 2018թ. համար որոշել, որ պետք է վնասազերծվի և ստերիլիզացվի 14-15 հազար շուն:

Տարոն Մարգարյան

-Մենք այդպիսի խոր ուսումնասիրություն չենք կատարել, եթե այդպիսի ուսումնասիրություն կարողանայինք անել, կկանխեինք այդ ամենը: Տարիների ընթացքում աճում է քաղաքացիների բողոքները, պահանջներն այս աշխատանքների կազմակերպման հետ կապված, քանի որ նաև մարզերից են Երևան քաղաք գալիս թափառող շները:

Մենք դիմել ենք Տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ կառավարություն՝ առաջարկելով թափառող շների ստերիլիզացման և հավաքման գործընթացն իրականացնել նաև մարզերում, քանի որ այնտեղ մեծ ծավալի աշխատանք չի կատարվում, մենք Երևան քաղաքում ունենում ենք խնդիրներ: Այդ պատճառով հստակ ոչ ոք չի կարող ասել, թե քանի թափառող կենդանի կա Երևան քաղաքում:

Մենք հիմա համագործակցում ենք միջազգային մի քանի կառույցների հետ, որպեսզի կարողանանք միջազգային փորձը կիրառել նաև Երևան քաղաքում: Ձեր կողմից եթե կան առաջարկներ, պատրաստ ենք դրանք ուսումնասիրել և քննարկել: Սա այն խնդիրն է, որին բոլորս միասին պետք է լուծում տանք:

Տիգրան Ավինյան

-Հասկանալի է պարոն քաղաքապետ:

Տարոն Մարգարյան

-Ձեր կողմից ներկայացված առաջարկությունները կարող եք Երևանի քաղաքապետի տեղակալ պարոն Օհանյանի հետ քննարկել, փորձենք համատեղ ուժերով լուծում տալ այս հարցին:

Տիգրան Ավինյան

-Ես մեծ հաճույքով կմասնակցեմ նման քննարկմանը, եթե հնարավոր լինի հունվար-փետրվար ամիսների մեջ կազմակերպել: Իմ կարծիքով սա կարևոր խնդիր է, որովհետև, եթե մենք չենք հասկանում շների ռեալ քանակը, մենք ամեն տարի մի թիվ ենք գրում, որի համար էլ փաստացի վճարում է քաղաքապետարանը:

Տարոն Մարգարյան

-Ո՛չ, ուղղակի թիվ չի գրվում, իրականում աշխատանք է կատարվում, որը մեր կողմից վերահսկվում է:

Տիգրան Ավինյան

-Լա՛վ, այդ դեպքում ես կսպասեմ արդեն կոնկրետ քայլերի:

Տարոն Մարգարյան

-Պարոն Օհանյանի հետ կարող եք քննարկումներ անցկացնել, նույնիսկ պատրաստ ենք վարչական շրջաններից մեկում պիլոտային ծրագիր իրականացնել:

Տիգրան Ավինյան

-Շատ բարի:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Արայիկ Հարությունյան, խնդրե՛մ:

Արայիկ Հարությունյան

-Շնորհակալությու՛ն: Պարոն Մարգարյան նախ մի կարճ հարց ունեմ Ձեզ. ինչպե՞ս եք վարվում այն վարչության պետերի հետ, ովքեր չեն կատարում Ձեր հանձնարարականները:

Տարոն Մարգարյան

-Տեղեկանում եմ, թե ինչ պատճառով չի կատարվել հանձնարարականը, որից հետո քայլեր ձեռնարկում:

Արայիկ Հարությունյան

-Անցնեմ բուն հարցին. անցած նիստի ժամանակ Դուք կոնկրետ հասցեներով հանձնարարական տվեցիք քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետ պարոն Հայկ Ասատրյանին:

Ձեզ պետք է ասեմ, որ կոնկրետ Մանուշյան 86 հասցեի հետ կապված, Ձեր հանձնարարականը չի կատարվել և առհասարակ, այսօր բյուջեի հետ կապված էլ էի ուզում ասել, որ ուղերձում հատուկ նշված էր, որ այս վարչությանը լրացուցիչ գումարներ են տրվել: Իմ դիտարկումներով տարվա վատագույն վարչությունը հենց այս վարչությունն է և կարծում եմ, որ այդ գումարներն իզուր են տրվել:

Հարցս հետևյալն է. ինչու՞ չի կատարվել Ձեր հանձնարարականը, և արդյոք Դուք տեղյակ եք այդ մասին, շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Շատ բարի, եթե հարցն այդ հասցեի ասֆալտապատման աշխատանքի վերաբերյալ է, որտեղ քաղաքացին սեփական տան դիմաց քանդել էր, ինձ զեկուցվել է և նկարներով հիմնավորվել, որ այդտեղ իրականացվել է ասֆալտապատման աշխատանք:

Ձեր երկրորդ բողոքի ժամանակ, ինձ համար ևս հարց էր, թե ինչու եք Դուք կրկին դիմում: Այնտեղ երկու հարևան իրար դեմ բողոք են ներկայացնում և Դուք, բնականաբար, նրանցից մեկի կողմնակիցն եք, միակողմանի եք նայում այդ հարցին:

Դուք, որ գնաք այնտեղ, տեղում կտեսնեք, որ փողոցի երկու կողմի բնակիչներն իրար դեմ բողոք են ներկայացնում: Նրանցից մեկը փոս էր արել, որպեսզի կարողանա իր բակ մտնել, մենք դա թույլ չտվեցինք: Դուք ասում եք, որ ամբողջությամբ այդ հատվածը չի վերականգնվել, եթե ամբողջությամբ վերականգնվի, իր տան դուռը, ուղղակի, չի բացվի, կարող եք գնալ տեղում նայել, իսկ դիմացի բնակիչն այնտեղ բազրիքներ է շարել: Ստացվում է իրեն կարելի է, մյուսին չի կարելի, անարդար է: Այս դեպքում պետք է նաև անդրադարձ կատարվի մյուս հարևանի կողմից կատարած կառուցապատման աշխատանքներին և երկու դեպքում էլ իրականացվի քանդման աշխատանքներ:

Արայիկ Հարությունյան

-Որևէ խնդիր չկա: Դիմացինի մասին ես ընդհանրապես չգիտեի:

Տարոն Մարգարյան

-Առաջարկում եմ Ձեզ պարոն Ասատրյանի հետ այցելել այդ տարածք և դա իրականացնել:

Արայիկ Հարությունյան

-Շնորհակալ եմ, ես պարոն Ասատրյանի հետ չեմ գնա: Բոլոր ապօրինությունները վերացնելը դա նրա գործառույթների մեջ է պարոն Մարգարյան, այդ հասցեում թող աշխատանքներն իրականացվեն երկկողմանի, որևէ խնդիր չկա:

Երկրորդ հարցս վերաբերում է մանկապարտեզներին. անընդհատ բողոքներ է գալիս դրամահավաքների հետ կապված: Իհարկե մեզանում շատ դժվար է սրան հետևելը, որովհետև ծնողները հրաժարվում են առերես դա հայտնել կամ բողոքը գրավոր ներկայացնել ու ներկայանալ, նրանք դա անում են անանուն:

Վերջերս ես մի գրություն էի ուղարկել Ձեզ՝ խնդրելով, որպեսզի բոլոր մանկապարտեզներում փակցվեն համապատասխան հայտարարություններ, որտեղ գրված կլինի, որոնք են անվճար դասընթացները, որոնք են վճարովի, կամընտրական

դասընթացները՝ լրացուցիչ կրթական ծրագրերը: Այստեղ դիտարկումները երբեմն ցույց են տալիս, որ կա ծնողների անտեղյակություն այս ամենի մասին, ինչի վրա նաև հմտորեն խաղում են տնօրենները, դաստիարակները և մյուս աշխատակիցները:

Ի զարմանս ինձ, պարոն Սուքիասյանից ստացել եմ նամակ, որտեղ ամեն ինչ բացատրվել էր, թե ինչպես են կրթական ծրագրերն իրականացվում և այլն, ինչի մասին ես իրեն չէի հարցրել, բայց հանձնարարական չէր տրվել այս հայտարարությունը փակցնելու հետ կապված ու շատ եմ տարակուսում, թե կոնկրետ կոռուպցիան վերացնելու առաջարկին ինչի չի ընդառաջվել:

Տարոն Մարգարյան

-Դուք էլ գիտեք, որ թե՛ վարչական շրջանները, թե՛ քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչությունը և մեր ողջ թիմը պայքարում ենք դրամահավաքությունը վերացնելու համար: Նման դեպքեր լինելու պարագայում, խնդրում եմ մեզ տեղեկացնել: Վերջին տարիներին, երբ նման բողոքներ եղել են, հարցն ուսումնասիրել ենք, որից հետո մարդիկ պատժվել են: Համոզված եղեք, եթե դրամահավաքություն լինի, մենք ապացուցենք, որ դա տեղի է ունեցել, անպայման պատժի ենք ենթարկելու, դա Ձեզ խոստանում եմ:

Դրա համար կա «Օգնիր մանկապարտեզիդ» ծրագիրը, որը հնարավորություն է տալիս վերահսկել այդ ամենը: Մանկապարտեզներին ֆինանսական օգնությունը պետք է լինի ծնողների ցանկությամբ, ոչ թե պարտադրաբար: Ուստի՝ խնդրելու եմ ավագանու անդամներին, մեր գործընկերներին ակտիվ մասնակից լինել այդ հարցին, եթե նման դեպքեր լինեն, կխնդրեմ անձամբ ինձ դրա մասին տեղեկացնել:

Ինչ վերաբերում է հայտարարություն փակցնելուն, պարոն Սուքիասյան վարչական շրջանների ղեկավարների և հանրակրթության վարչության պետի հետ այդ հարցն ինձ մոտ կքննարկենք՝ հասկանալու համար որն է խնդիրը և ինչ մոտեցում պետք է ցույց տալ: Դեմ չեմ, որ մարդիկ իրազեկված լինեն: Դա արել ենք դպրոցներում և այնտեղ նման խնդիր չունենք, եթե մանկապարտեզներում այդ խնդիրը կա, միանշանակ պետք է փորձենք լուծում տալ:

Արայիկ Հարությունյան

-Հանրակրթության վարչության պետի հետ այս առումով արդյունավետ աշխատում ենք և աշխատաժամերի հետ կապված, այդ հարցը հենց տիկին Ստեփանյանի շնորհիվ լուծվեց: Ինձ համար շատ տարօրինակ էր պարոն Սուքիասյանի այդ պատասխանը, կարծում եմ այստեղ պետք է հանձնարարական լինի, որովհետև այդտեղ որևէ վտանգավոր բան չկա ո՛չ մանկապարտեզների տնօրենների, ո՛չ էլ մյուսների համար: Սա կոռուպցիան կանխելու միջոց է:

Տարոն Մարգարյան

-Պարո՛ն Սուքիասյանին, հանրակրթության վարչության պետին և վարչական շրջանների ղեկավարներին արդեն հանձնարարվեց տոներից հետո այդ ուղղությամբ աշխատանքներ տանել և հարցին լուծում տալ:

Ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանը հայտարարում եմ փակված:

Շնորհակալությու՛ն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կազմեց՝ Ա. Եփրիկյան